

ԳԱՏԻՐԷԻ ՄԷՋ ՆԵՊԻՏ ՊԵՐՐԻ ՏԵՍԱԿՅԵՅԱԻ ՆԱԽԱԳԱՏ ՀԻՒՄՆԻ ՄՈՒՊԱՐԱՔԻ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիտ Պրրի երեկ Գաիիրի մէջ հանդիպումներ ունեցաւ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի, արտաքին գործոց նախարար Ամր Մուսայի եւ Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Իսմաիլ Ապտէլ Մեկիտի հետ:

Մուպարաբի հետ իր ունեցած տեսակցութեան հետք Պրրի յայտարարեց, որ Եգիպտոսի ղեկավարին փոխանցած է նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ Լիբանանի ժողովուրդին ողջոյնները: Ան ըսաւ, որ Եգիպտոսի նախագահին հետ քննարկած է հարաւային Լիբանանի իրավիճակը՝ 22 տարուան բռնազրուումէն ետք պարզած անոր ներկայ կացութեան լոյսին տակ, որուն մասին տեղեկագիր մը ներկայացուցած է խընդմետ օժանդակել Լիբանանի, ինչպէս նաեւ՝ նեցուկ կանգնել Լիբանանի նուիրատու երկիրներու Պէյրութի մէջ ժողով գումարելու աշխատանքներուն:

Պրրի նաեւ յայտնեց, որ արծարծած է թիւ 425 որոշումը շրջանցելու եւ Մապարեի Շրպանա բռնազրուումը պահելու իսրայէլեան խուսանատումներուն հարցը: Պրրի շնորհակալութիւն յայտնած է Եգիպտոսի կողմէ Լիբանանի տրամադրուած մարդասիրական եւ քաղաքական բոլոր օժանդակութիւններուն համար:

Ապտէլ Մեկիտի հետ հանդիպման ընթացքին, Պրրի բարձր գնահատեց հարաւային Լիբանանի դատին նկատմամբ արաբ ղեկավարին ցուցաբերած պարակցութիւնը, խնդրելով, որ ան շարունակէ իր հաղորդակցութիւնները՝ վերջ դնելու համար Լիբանանի սահմաններէն ներս իսրայէլեան ոստիկանութիւններուն:

Պրրի նաեւ պահանջեց գործադրել արաբ արտաքին գործոց նախարարներու Պէյրութի ժողովին Լիբանանի խոստացուած օժանդակութիւնները ապահովելու որոշումը:

Պրրի սահմանափակ խախտումներն ու օժանդակութիւններու կարիքը քննարկելու նաեւ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսայի հետ, ապա յայտնեց, որ ՄԱԿի յատուկ պատվիրակ Թէրի Ռոտ Լարսըն Ուրբաթ օր պիտի ժամանէ Լիբանան՝ լուծելու համար այս հարցը:

Հարցումի մը պատասխանելով՝ Պրրի հաստատեց, որ Լիբանանի մէջ սուրիական բանակին ներկայութիւնը օրինակաւ է եւ Լիբանանի ժողովուրդին պահանջով է:

ՍՈՒՐԻԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԸ ԶՕՐԱԿՑԻՆ ԶՕՐ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԻ

ԴԱՄԱՍԿՈՍ, 4 (ՌՈՅԹԸՐԸ)- Սուրիոյ կառավարական ընկերակցութեան անդամ կուսակցութիւնները պարակցութիւն յայտնեցին ԿՕՐ. Պաշար Ասատի եւ իրենց հետեւորդներուն թելադրեցին «այո» քուէարկել Յուլիս 10ի հանրաքուէին:

Համայնավար Կուսակցութիւնը հրապարակած է յայտարարութիւն մը, որ կոչ կ'ուղղէ իր բոլոր անդամներուն եւ բարեկամներուն՝ մասնակցելու հանրաքուէին եւ իրենց «այո»ն ըսելու ԿՕՐ. Ասատի նախագահութեան:

Նոյնանման բովանդակութեամբ յայտարարութիւն մը հրապարակեց նաեւ Ընկերավարական Միութիւնը, որ շեշտեց, թէ ԿՕՐ. Պաշար Ասատի ընտրութիւնը պիտի երաշխաւորէ տընտեսական եւ վարչական բարեկարգումներու իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԻ ՅԱԻԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

ԵՐԵՒԱՆ, 4 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան ցաւակցական նամակ մը յղեց Վահէ Օշականի ընտանիքին: Նամակին մէջ կը նշուի.

«Մեծ ցաւով տեղեկացանք անուանի բանաստեղծ, մշակութային եւ հասարակական գործիչ Վահէ Օշականի մահուան լուրը: Անոր բազմաթիւ ստեղծագործութիւնները, հրատարակուած գործերը, բարգձմանակալ եւ գրականագիտական եռանդուն գործունէութիւնը սփիւռեցան, մշակութային կեանքի ամենավառ դրսեւորումներէն էր. եւ որուն բացակայութիւնը մեծ կորուստ է նաեւ հայրենի գրական աշխարհին համար»:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՉԻ ԿՐՆԱՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ, ԵԹԷ ԻՍՐԱՅԷԼ ՉՃԱՆՉՆԱՅ ԶԱՅՆ

Կ'ԸՍԷ ԵՈՍԻ ՊԷՅԼԻՆ

Իսրայէլի արդարութեան նախարար Եոսի Պէլլին երէկ ըսաւ, որ պաղեստինեան պետութիւն մը չի կրնար գոյութիւն ունենալ, եթէ հրեական պետութիւնը ճանաչում չտայ անոր:

Պէլլին կը հակադարձէր Պաղեստինեան Կեդրոնական Խորհուրդին (ԿԻՊՐ) խորհրդարանին կողմէ հրապարակուած յայտարարութեան, որ կը յայտնէր, թէ պաղեստինցիները պատուութիւնը պիտի ունենան պետութիւն հռչակելու, եթէ մինչեւ 13 Սեպտեմբեր կարելի չ'ըլլայ իսրայէլեան համաձայնագիր մը ստորագրել Իսրայէլի հետ: Պէլլին շեշտեց, որ պաղեստինեան պետութիւն մը թուղթի վրայ պիտի մնայ, նոյնիսկ եթէ ամբողջ աշխարհը ճանաչում տայ միակողմանի յայտարարութեան:

Իսրայէլ եւ պաղեստինեան իշխանութիւնը բանակցութիւններ կ'ունենան լուծելու համար կարգ մը փշոտ հարցեր, որոնք կ'արգելակեն համաձայնագիր մը ստորագրութիւնը:

Պաղեստինցիներն ու Իսրայէլ սկզբունքային համաձայնութիւն մը գոյացուցած են իսրայէլեան գործընթացը վերջնական համաձայնագրով մը եզրակացնելու 13 Սեպտեմբերին: Մեկնաբաններն ու դէտեր անհաւանական կը նկատեն, որ այս ժամկետը յարգուի, որովհետեւ բանակցութիւնները դժուարութիւններու կը բախին:

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաշ մեկնաբանութիւն չկատարեց Պ. Կ. Խորհուր-

դին հրապարակած յայտարարութեան մասին:

Պ. Կ. Խորհուրդը Երկուշաբթի երեկոյեան արարած էր երկօրեայ նիստերը եւ հրապարակած՝ յայտարարութիւն մը, որ պարզապէս կը կանգնի անկախ պետութիւն մը հռչակելու Արաֆաթի ծրագրին: Յայտարարութիւնը կը նշէր, որ 13 Սեպտեմբերը պիտի ըլլայ հաւանաբար յարմար թուականը հռչակելու համար այդ պետութիւնը, որուն մայրաքաղաքը պիտի ըլլայ Երուսաղէմը: Պաղեստինցի պաշտօնատար մը դիտել տուաւ, որ հաստատութեան մը չէ ճշտարարութիւնները ձայնողին:

Պաղեստինեան իշխանութեան կառավարութեան անդամ Նապիլ Շաաթ իր կարգին յայտնեց, որ պաղեստինեան բոլոր շրջանակներուն միջեւ համախոհութիւն մը կայ անկախ պետութիւնը այս տարի հռչակելու մասին: Իսկ Արաֆաթի խորհրդատուներէն Թայեյ Ապտէլուախիմ ըսաւ, որ պաղեստինեան իշխանութիւնը մինչեւ 13 Սեպտեմբեր ատիթ պիտի տայ բանակցութիւններուն, որ պէսպիս յստաջիւղաց արձանագրեն:

Պ. Կ. Խորհուրդին յայտարարութիւնը քննարկուողներուն կարգին էր Իսրայէլի արտաքին գործոց նախարար Տէվիտ Լեի, որ վերջապէս իր պետութիւնը եւ անոր կոչ ուղեց պատրաստ ըլլալու պաղեստինեան պետութիւն մը հռչակելու կարելիութեան մը դիմաց: Լեի ըսաւ նաեւ, որ Պ. Կ. Խորհուրդին յայտարարութիւնը կը

ՔԼԻՆԹԸՆ ԿԸ ԽՕՍԻ
ՊԱՐԱՔԻ
ԵՒ ԱՐԱՖԱԹԻ ԷԾՏ

Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլինթըն Երկուշաբթի գիշեր հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Պարաբի եւ Արաֆաթի հետ, յայտնեց Սպիտակ Տունը:

Քլինթըն երկու ղեկավարներուն հետ արծարծած է բանակցութիւններուն յստաջիւղացը արգելափակող դժուարութիւնները լուծելու կարելիութիւնները: Սակայն ան ոչինչ ըսած է եռակողմանի վեհաժողովի թուականին մասին, ակնցուց Սպիտակ Տան բանբերը:

Սպիտակ Տան ապագային ապահովութեան խորհուրդին բանբերը յայտնեց, որ յարմար պատու Քլինթըն հանդիպումի մը պիտի հրախրէ Արաֆաթն ու Պարաբը:

(ՌՈՅԹԸՐԸ)

Յ. Յ. ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԶԵԼՍԻՆՔԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

ԵՐԵՒԱՆ, 4 (ԱՐՄԵՆՓՐԵՍ).- Եւրոպական Խորհուրդին մօտ Հայաստանի պատուիրարութեան անդամ, Ապրիլեան Ընկերակցութեան կողմէ Հայաստանը վարկաբեկող բովանդակութեամբ փաստաթուղթին Երեւանէն յղումը:

Փաստաթուղթին մէջ մասնաւորաբար կը նշուէր, թէ Հայաստան

ի կազմում անդամներ (որ կը քննարկէր Հայաստանի անդամակցութեան հարցը) Հեղուրեան Ընկերակցութեան կողմէ Հայաստանը վարկաբեկող բովանդակութեամբ փաստաթուղթին Երեւանէն յղումը:

Փաստաթուղթին մէջ մասնաւորաբար կը նշուէր, թէ Հայաստան

ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երեկ Արամ Ա. կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանիի: Դեսպանին կ'ընկերակցէր դեսպանատան քաղաքական հարցերու պատասխանատուն:

Ռոբորդակցութիւնը կեդրոնացաւ Լիբանանի ներկայ կացութեան, շրջանի իրավիճակին եւ յատկապէս յոռաշիկայ շարքը վեհափառին Պարսկաստան կատարելիք այցելութեան վրայ:

Արամ Ա. կաթողիկոս յոռաշիկայ Չորեքշաբթի կը մեկնի Պարսկաստան:

ԻՍՐԱՅԷԼ ԱՅՑԵԼԱԾ ԱԼԵՏԻՒԱՅԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՉԱՆ ԱԼԺԷ

Ալեքեիացի ուրբ լրագրողներ, որոնք Իսրայէլ այցելած էին, երկուշաբթի օր Ալեքեիայի երեսփարան, ուր հանրային կարծիքը այս հարցով բաժնուած էր երկուքի՝ զօրակցողներ եւ դատաւարողներ:

Ալեքեիացիներ յայտնեցին, որ Ալժէի օդակայանը լրագրողներուն կը սպասէին ապահովութեան ուժեր, որոնք իրենց ինքնաշարժներով փոխադրած են զանոնք: Յստակ չէ, թէ իշխանութիւնները ինչպիսի միջոցառումներ պիտի որդեգրեն լրագրողներուն դէմ, որոնք դաւաճաններ կը նկատուին:

Ալժէի օդակայանին մէջ, անկախ մամուլի անելի բան եօթանասուն լրագրողներ զօրակցական կոչեցին զիմաւորեցին իրենց պաշտօնակիցները: Միւս կողմէ, իսրայէլական ուսանողներու իմբակ մը հակաիսրայէլեան նշանախօսքեր կը բացագանչէր:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵԱՀԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ԵԱՀԿի Մինսքի խմբակի Համանախագահներ Քերի Քաւանո (Մ. Նահանգներ), Նիքոլայ Կրիպոզ (Ռուսիա) եւ Ժան-ժաք Կայար (Ֆրանսա) Պաքոն Եւ տեղեկանալիքը այցելելու ետք, երկու երեսուն հասան:

«Պաքոնի եւ տեղեկանալիքի մէջ քննարկեցինք Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման, ինչպէս նաեւ շրջանային տնտեսական գործակցութեան վերաբերող հարցեր», յայտնեց Ք. Քաւանո օդակայանին մէջ ունեցած հարցազրոյցին ընթացքին: Ան ըսաւ, որ Համանախագահութիւնը այցելած է Ղարաբաղի կարմիր Կամուրջ շրջանը, որ Պաքոն կը կապէ Թիֆլիսին:

«Մենք պիտի ուզենք, որ Ղարաբաղ ինչպէս անցեալին, այսօր եւս կապէր նաեւ Երեւանը՝ Թիֆլիսին եւ Պաքոնին», ըսաւ ամերիկացի դիւանագետը: Ան նշեց, որ Համանախագահութիւնը այցելած է նաեւ Իջևանը Ղարաբաղի միացնող շրջանը: Անոնք քննարկած են խաղաղութեան հաստատումն էտք երկաթուղին վերստին գործի յծելու կարելիութիւնը: Լեռնային Ղարաբաղի մէջ Համանախագահութիւնը այցելած է այն շրջանները, ուր կ'անցնէր Արցախի ճան - Նախիջևան կապուած:

Տագնապի լուծման Համար նոր առաջարկներու մասին հարցումի մը պատասխանելով, Ք. Քաւանո ըսաւ, որ միջոց կան նոր առաջարկներ եւ Մինսքի խմբակի ստեղծուած է նոր առաջարկներ մշակելու համար: Ան ըսաւ, որ 12 Յունիսին Վիեննայի մէջ Մինսքի խմբակին Համանախագահութիւնը խմբակին անդամ միւս երկիրներուն պիտի գեկուզէ բանակցութիւններուն գործընթացի ներկայ փուլին մասին: Վիեննայի Հանդիպումն էտք, ԵԱՀԿի նախագահ Ֆերերօ Վալտերը պիտի այցելէ Երեւան եւ Պաքոն:

Թուս Համանախագահ Ն. Կրիպոզ նշեց, որ ներկայիս դժուար է ըսել, թէ երբ կը վերսկսին բանակցութիւնները՝ Լեռնային Ղարաբաղի մասնակցութեամբ: Ան ըսաւ, որ հարցը կը քննարկուի կողմերուն հետ

Շարք էջ 2

ՌԻԱԾԻՆԿԹԸՆԻ ԵՒ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ՉԷ ՔՆՆԱՐԿՈՒԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՓՈՒԱՆԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ

Կ'ԸՍԷ ՍՍԱԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Սսկանեան յայտնեց, որ Ռուսիայի կողմից Եւ Փարիզի մէջ տեղի ունեցած հանդիպումներուն ընթացքին չէ քննարկուած հողային փոխանակման հարցը՝ իբրեւ տարբերակ Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման:

Նախարար Սսկանեան ըսաւ, որ հայ - ամերիկեան եւ հայ - ֆրանսական բանակցութիւններուն ընթացքին քննարկուած են Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման իրատեսական եւ ոչ-իրատեսական տարբերակները: «Հողային փոխանակման հարցը օրակարգի վրայ չէ եղած», ըսաւ Հայաստանի դիւանագիտութեան պետը:

Շարք էջ 10

ՆԱԽԱԳԱՅ ԲՈՇԱՐԵԱՆԻ ԲԱՆԲԵՐ ՎԱՅԷ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ ՏՈՒՄԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ ՍԸ

Հայաստանի նախագահի բանբեր Վահէ Գարրիկեան երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեանի Միացեալ Նահանգներ եւ Ֆրանսա կատարած այցելութիւններուն:

Վ. Գարրիկեան յայտնեց, որ Միացեալ Նահանգներուն եւ Ֆրանսայի նախագահները պատրաստակամութիւն յայտնած են անձամբ օժանդակելու Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման: Անոնք գործափոխ կը կանգնին հարցին լուծման այն տարրերակին, որ պիտի բաւարարէ Հայկական եւ ազրիպլճանական կողմերը:

Վ. Գարրիկեան յայտնեց, որ նախագահ Ժաք Շիրաք պաշտօնապէս հրաւիրած է նախագահ Քոչարեանը՝ Ֆրանսա այցելելու: Այցելութիւնը տեղի պիտի ունենայ Փետրուար 2001ին: Իր կարգին, նախագահ Քոչարեան Ժաք Շիրաքը Հայաստան այցելելու հրաւիրեց:

Անդրադառնալով Միացեալ Նահանգներու Ֆրանսիա եւ Համաշխարհային Դրամատան ղեկավարութեան հետ նախագահ Քոչարեանի Հանդիպումներուն, Վ. Գարրիկեան ըսաւ, որ «Հայաստանի նկատմամբ վստահութիւնը վերականգնած է»:

Ինչ կը վերաբերի Քոչարեան - Քորթ Քորթորեան Հանդիպումին, բանբերը յայտնեց, որ Քորթորեան խոստացած է արագացնել Հայաստանի տնտեսութեան զարգացման եւ ճանապարհաշինութեան Համար յատկացած 100 միլիոն տոյարի օժանդակութիւնը: Այդ գումարը պիտի յատկացուի Երեւան - Թիֆլիս մայրուղիին վերաշինութեան եւ Աղէտի գօտին մէջ դպրոցներու եւ բուժարաններու շինութեան:

Վ. Գարրիկեան յայտնեց, որ նախագահ Քոչարեան Հանդիպում ունեցած է նաեւ Շարլ Ազնաւուրի հետ:

ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԷՐ

Ըստ քրեական և հայկական աղբյուրներու, Հայաստանէն չորս պաշտօնատարներ թուրքիոյ Անվտանգութեան նախարարութեան կողմ Կարսէն արտաքսուէր են Գիւմրի: «Երկիր» իր 30 Յունիսի քիով հրատարակած է «Հուրրիթ» քերթն յօդուած մը, Գ. Մխիթարեանի քրեակցութիւնը և իր կողմ կարծակնարկ մը, ստորեւ կու տանք ամբողջութեամբ:

«Ինքզրոյն» կը հաղորդէ, թէ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Արար Պապեան ցաւ յայտնած է այս արտաքսութիւն հարմար: Ան նաեւ «անյստակ» որակած է թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութիւնը, որ արտաքսութիւն որդշումը կապած է Հայկական Յեղափոխութեան ձառնարկին համար Հայաստանի կատարած ձիգերուն: «այս դէպքը չի համապատասխանիր հայ-թրքական երկխոսութեան հողովոյքին և չի նպաստեր շրջանին մէջ խաղաղութիւն և կայունութիւն հաստատելու միտող

Թուրքը մնում է թուրք, եւ հայը թուրքի համար մշտագոյ թշնամի է: Կերպար ստեղծողը մենք չենք: առանց այդ էլ պատմութեան ընթացքում հայի տեսակը չսիրող թոյլ կամ ուժեղ հակառակորդներ շատ ենք ունեցել, եւ թիւ աւելացնելու կարիք չկար: Թշնամու կերպար սարքողը, հային թշնամի տեսնողը թուրքը եղաւ, որովհետեւ իր բնօրրանից կտրուել, եկել-հասել էր մեր աշխարհ ու պիտի իր համար հայրենիք կերտել մեր հողի վրայ, մեր ունեցածի հաշիւին: Մենք դարձանք իր անգարող՝ առ այսօր ու յաւերժ: Հայ մարդու եւ թուրք մարդու խնդիր չկայ, կայ թուրքի կողմից հայի մերժում, հայի ժխտում, հայի վերացում: Հող և արիւն: հայի արիւն ունեցողը պիտի չապրի այն հողի վրայ, որ թուրքը այլեւս իր տարածքն է համարում: Այդպէս է եղել երեւ, այդպէս է այսօր եւ այդպէս է լինելու... էլ թուրքը գիտի մինչէն երբ: Մեր «մինչ երբ»ը պարզ ու յստակ է:

Կերջին շրջանում դրացական յարաբերութիւններ հաստատելու անընդհատ փորձեր արուեսին եւ, բնական է, որ դեռ կ'արուեսն: Հայերիս կողմից՝ ձեւ ստեղծելու յոյսով (իսկ մեր նախնին իշխանաւորներն անգամ ձեւն էլ գտած՝ հրճարարութիւն որեւէ պահանջից), թուրքերի կողմից՝ թուրքավարի՝ մտքում այլ բան ունենալով: Տեսական կարծիք չէ սա, այլ՝ ցրանց բնոյթը:

Ահաւասիկ օրուան յստակ օրինակը. թուրքական կողմի հրաւերով որպէս պատուիրակութիւն Կարս ժամանած հայերին վտարում են երկրից՝ Անվտանգութեան նախարարութեան յայտարարութեամբ մատ թափ տալով, թէ «Չճայած թուրքական կողմի բազմաթիւ զգուշացումներին, Հայաստանը շարունակում է պատմութեան շահարկման միջոցով թշնամանք տարածելու իր քաղաքականութիւնը, որն առաւել մեծ չափեր է ընդունում»: Եւ այլն: Ուրեմն, իրաւ, թուրքը մնում է թուրք, եւ հայը թուրքի համար թշնամի է: Սա՝ ակնկալիքներ ունեցողների համար:

* * *

Ո՞Վ ԵՍ — ԸԱՅ ԵՍ

Դէպքի կապակցութեամբ գրուեցինք Գիւմրիի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Լեւոն Խաչատրեանի հետ, որը եղել է պատուիրակութեան կազմում:

Պարոն Խաչատրեանը պատմեց, որ իրենք թուրքիա են մեկնել Կարսի քաղաքապետ Նախիֆ Ախիպի յօդուած հրակրով՝ մասնակցելու Կովկասի կառնաքննման նախապատրաստական համաձայնութեան, որտեղ պէտք է քննարկուէին նաեւ շրջանային համարակալան խնդիրներ: Ախալցխայի սահմանագիծից հետոստային կապով Կարսի քաղաքապետին տեղեկացրել են պատուիրակութեան կազմի ու ժամանման մասին: Ի պատասխան՝ իրենց յայտնել են, որ Սիմեոն Հիւրանոցում, որտեղ Հայաստանի պատուիրակութեան համար համարներ են պատուիրակած, նրանց ի ընդունի քաղաքապետարանի ներկայացուցիչը եւ կը ծանօթացնի ամբողջ ծրագրին:

«Մէկ-մէկ կուկէկս ժամ անց, երբ Հիւրանոցի նախասրբահում գրուցում էինք Կարսի քաղաքապետի երբօր հետ,՝ պատմեց Լեւոն Խաչատրեանը, - 10-12 ոստիկաններ ռեզիդենտութեամբ մեզ մօտեցաւ քաղաքացիական հազուստով մէկը: Քաղաքապետի եղբայրը նրան ներկայացրեց որպէս Կարսի անվտանգութեան ծառայութեան պետ: Կուպիտ ձեւով նա ցուցնումստոր մեզ վրայ տնկեց եւ սկսեց հերթով հարցնել: «Ո՞վ ես, ո՞վ ես, ո՞վ ես...»: Որից յետոյ յայտարարեց հետեւեալը: «Թուրքիայի արտաքին գործոց նախարարութիւնն ու ներքին գործերի նախարարութիւնը ցանկալի չեն համարում ձեր մասնակցութիւնը համագործակցութեան: Ձեզ տրոււմ է 15 րոպէ ժամանակ՝ իրերը հաւաքելու համար: Ձեզանից պահանջոււմ է անյապաղ թողնել թուրքիայի տարածքը»: Անվտանգութեան ծառայութեան մեքենայի ուղեկցութեամբ էլ հասանք սահմանակէտ»:

ԳՈՒՍԱՐ ՄՈՒԹԱՐԵԱՆ

Հ.Ս.Ս. ԱՆԹԻԿԱՍ
ՍԿԱՌՏՈՒԹԻՒՆ

ՍԿԱՌՏԱԿԱՆ ՀԱՄԱՔ

Սկառուական հաւաքոյթներու ամառային ժամանակացոյցով հաւաքոյթներ տեղի կ'ունենան Երկուշաբթի օրը «Եղիշ Մանուկեան» կեդրոնին մէջ, Սգահէր, կէսօրէ ետք ժամը 6:00էն 8:00: Երկուշաբթի, 10 Յուլիս 2000էն սկսեալ:

ՄԱՍՆԱԶԻԻՎԻ ՍԿԱՌՏ. ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՄԱՐՁԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

աշխատանքներուն», ըսած է ան: Միւս կողմէ, քրեական «Անտողոյ» գործակալութիւնը կը յայտնէ, թէ թուրքիոյ մօտ Ազգայնամբի դեսպան Մեհմետ Ներուզօղլու Կարսի մէջ յայտարարած է, որ հայերը թուրքիոյ նկատմամբ լաւ տրամադրուած չեն և ցեղասպանութեան մասին ամբաստանութիւններով լոպիթը կը կազմեն: Ան ըսած է նաեւ, որ Հայաստանի հետ սահմանադրուի բացումը Կարսի համար նպաստաւոր պիտի չլլայ:

Ընթերցողին համար պարզ պիտի ըլլայ ոչ միայն որ՝ «թուրքը կը մնայ թուրք», այլ նաեւ, որ թուրքիոյ եւ Ազգայնամբի ամբողջական գործակցութիւնը լուծեամբ հակահայ է: Հայ քաղաքական միտքը պէտք է միանգամընդմիջ տանդրադառնայ, որ «դարաւոր սոսիք» է ու կը մնայ հայրենադուս Եւ Հայաստանին մնայուն թշնամին թէ ուղիղաքաղաքական եւ թէ տնտեսական իմաստով:

«ՄԵՆ ԱՍՈՐ ԸԱՅ ՇԻՐԵՐԻՆ»

Կովկասեան անվտանգութեան համաձայնութիւնը ստեղծելու ճանապարհին Կարսի իշխանութիւնների անհետեւողականութեան արդիւնքում Հայաստանից ժամանած 4 պաշտօնեայ անվտանգութեան մարմինների կողմից արտաքսուել են թուրքիայից: Կովկասեան գութեան մարմինների համապատասխան աշխատակիցները մշել են, որ պաշտօնական հրաւեր հիւրերը չեն ստացել:

Գիւմրիի փոխ մարզպետ Վոլոտիա Անուսեանը, փոխ քաղաքապետ Լեւոն Սալատրեանը, առետորի պալատի նախագահ Յարութիւն Յովհաննիսեանը եւ թարգմանիչ Մուրատ Ազիզեանը Կարսի «Սիմեոն» հիւրանոցի անմիջապէս ուղեկցուել են սահմանից դուրս, քանի որ նրանց ներկայացուել է ոչ պաշտօնական այցելութեան մասին արձանագրութիւն:

Հայաստանից ժամանած հիւրերը Կարսի նահանգ են անցել Վրաստանի տարածքով: Այն ժամանակ, երբ Կարսի քաղաքապետ Նախիֆ Ախիպէօղլուն էր նրա ներքայրը՝ գործարար Ալիշահ Ախիպէօղլուն, հիւրանոցում գրուցում էին հայ հիւրերի հետ, անհանգի անվտանգութեան պետի տեղակալ Քէօքալ Ավճըմ անմիջապէս պահանջել է հեռանալ Կարսից:

Անվտանգութեան պետի տեղակալը, խիստ պահածքով, առանց բացատրութիւն տալու, հայերից պահանջել է իրերը հաւաքել եւ անձամբ ուղեկցել է մինչեւ սահման:

Հայաստանից ժամանած պատուիրակութեան անդամները, սահմանն անցնելով, ասել են. «Մեր քաղաքները իրարից հեռու են ընդամենը մի քանի քիլոմէթր: Մենք պատմական հարեւաններ ենք: Այն էօր հարիւր տարի հայեր գալիս-գնում են թուրքիա: Մենք անցեալը չենք քննարկում: Եկել ենք՝ մեր բարեկամների հետ մասնագործակցելու առեւտրական, մշակութային եւ մարմնամարզի բնագաւառներում: Վաղը սահմանները կը բացուեն, եւ այս միջադէպից անշողներ, անշուշտ, կը լինեն»:

Թուրքիայի մերքին և արտաքին գործերի նախարարութիւններից ստացուած տեղեկութիւնների համաձայն, անվտանգութեան աշխատակիցները հայերին անմիջապէս արտաքսել են, որպէսզի չզայրացնեն արպիւլճանցիներին:

Նոյն օրը Անգարայից Կարս էր ժամանել նաեւ թուրքիայի նախկին արտաքին գործոց նախարար Մուրատ Վարալչընը՝ մասնակցելու հէց այն հանդիպմանը, որի համար հրաւիրուել էր հայերի պատուիրակութիւնը: Նախկին արտաքին գործոց նախարարը, տեղեկացելով միջադէպի մասին, այն որակել է որպէս «դժբախտութիւն» Կովկասեան անվտանգութեան համաձայնութիւնը ստեղծելու ճանապարհին: Եւ մշել է նաեւ, որ հանդիպումը գաղտնի չէր եւ քաղաքական որեւէ երանգ չէր ստանալու, ընդհակառակը՝ այն Կովկասում խաղաղութեան և համագործակցութեան ճանապարհներ գտնելու նպատակ էր հետապնդում:

Կարելի է ենթադրել, որ Կարսի իշխանութիւնները շրջանային համագործակցութիւն ծաւալելու հարցում ենթադրոււմ են ճնշումներ:

Թուրքիայի 9րդ նախագահ Մուլլէթման Տեմիրէլը, որը Կարս էր ժամանել՝ մասնակցելու նոյն հանդիպմանը, կոչ է արել հայ-ազրպէլճանակաւ հակամարտութիւնը կարգաւորել խաղաղութեամբ: Տեմիրէլը մերքին գործերի նախարար Սաատեօտիս Թանթանի ուղեկցութեամբ Յունիսի շրջան ժամանել է Կարսի ռազմապահ: Եկել են նաեւ Նախիֆեանի, Վրաստանի, Ազրպէլճանի եւ Իտուսաստանի պատուիրակութիւնները: Հանդիպման մասնակիցներին տեղեկացուել է, որ Հայաստանից ոչ ոք չի հրաւիրուել:

Տեմիրէլը, հանդիպմանը ելոյթ ունենալով, մշել է հետեւեալը. «Ցաւով ճշում են, որ Հայաստանը, անկախ պետութիւն լինելով հանդերձ, միջամտեց՝ Արաքսէլճանցի գետի միջին և ստեղծող իրադարձութիւններին: Ազրպէլճանցի գետի միջին կտորն է: Արաքսէլճանցի մեր շրջակայքում բնակուող ազրպէլճանցիներին քշեց իրենց բնակավայրերից: Ի միջին ազրպէլճանցի մեր եղբայրները փախուստի մատուցեցին: Դա մեծ բեռ դարձաւ Ազրպէլճանցի համար: Մենք արդէն յայտնել ենք, որ Հայաստանի հետ անցեալի որեւէ խնդիր չունենք: Ինչել ենք, որ պատրաստ ենք աջակցելու ինչպէս Ազրպէլճանցի, այնպէս էլ Հայաստանին, եթէ նրանք փորձեն հասնել խաղաղութեան: Մինչեւ այժմ այդ խաղաղութիւնը չի հաստատուել: Խոստում է սահմանը բացելու մասին: Պէտք է տեսնել, թէ որքանով է օգտակար կամ վնասակար այդ: Աշխարհում ձեզանց բացի կայ նաեւ ազրպէլճանցի ժողովուրդը: Եթէ դուք մի քանի դահեկանի համար կորցնէք ձեր խիղճը, ապա մենք պատրաստ ենք կորցնելու ձեր կորցնելու արդարեւ ապագայի համար: Այն էօր ինչ չէ, որ կախումս է առետորից: Մենք ամենից շատ ցանկանում ենք խաղաղութիւն տեսնել Ազրպէլճանցում: Թուրքիան պէտք չէ ցաւ պատճառի Ազրպէլճանցին: Խաղաղութիւն հաստատել: Այստե՛ս՝ ինչպէս Ազրպէլճանցին, այնպէս էլ Հայաստանին: Խաղաղութեան պայմաններից մէկը Ի միջին ազրպէլճանցի գաղթականների վերադարձն է իրենց հողերը: Դրանից յետոյ թուրքիան ձեզանց կը տա իր բարեհաճ վերաբերմունքը»:

Տեմիրէլը մասնակցել է նաեւ Կարսի «Սիմեոն» հիւրանոցի ընթացքում եւ վերադարձել Անգարա:

Թարգմանութիւնը՝ ԱՇՈՏ ՍՈՂՍՈՒՆԵԱՆԻ «Հուրրիթ», 29-06-2000

ՎԼԱՏԻՍԻՐ ՓՈՒԹԻՆԸ ԲԱՅՈՒՄ Է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԷՋ

Զգիտեան ինչու, ուսուկան (եւ ոչ միայն) հասարակական գիտակցութեան մէջ Վլատիմիր Փուլիինն ընկալոււմ է իրրեւ Պորիս Եյցիինի «հոգեգաւակ»: Սակայն այստեղ ենթակայական գործօնի դերի գերագնահատումը միտում ունի ուղղակի անտեսելու և արակայական հանցամանքները, իսկ դա քաղաքագիտորէն միամիտ եւ մարդկայնօրէն անարդարացի դիտարկոււմ է: Ըստ այս, Վլատիմիր Փուլիինի երեւոյթը մեծապէս պայմանաւորուած էր ուսուկան հասարակութեան առարկայական իրականութեամբ՝ Փուլիինը չէր կարող «չծնուել»: Թուսը, որքան էլ «վարակուի» մարդու իրաւունքների բացարձակացման արեւմտեան արժէքներով, երբեք չի հաշտուի հայրենիքն ու հայրենի պետութեան հզորութիւնը «երկրորդական» համարելու քարոզին: Դա հայրենիքի սուր զգացողութիւն ունեցող ժողովուրդ է՝ պատրաստ ամէն ինչ, ամէն տեսակ «մարդու իրաւունքներ» գոհարեւելու հայրենի պետութեան հզորութեան ամրապնդմանը: Վլատիմիր Փուլիինը ահա հասարակական այս ծանր երկունքի, այս տրամադրութիւնների արտայայտութիւնն է: Եթէ որեւէ բան առաւելագոյնս խթանեց Փուլիինի «կայացումը», ապա դա առաջին հերթին Թուսաստանի պատմական վեհութիւնը կորցնելու հասարակական տագնապն էր: Եւ այդ տագնապն իր գագաթնակէտին հասաւ Փուլիինի վարչապետութեան ամենագրում, երբ Չեչենիայում արմատակալած իսլամ ծայրայեղականները յարմար գտան իրատեսանքն էլ Հարասային Կովկասը Թուսաստանից բռնի ուժով ստեղծելու, այնտեղ «Համախալամական պետութեան» հիմք դնելու իրենց վաղեմի ու խելայեղ ծրագիրը: Չէր կարելի աւելի ծանր մի անարգանք սացնել ուսուկանի հասարակական հոգեբանութեանը, քան տաղստանեան յարակից շրջանների վրայ յարձակումն էր եւ բուռն ուսուկան քաղաքներում, այդ թուում Սոսկուկում ահաբեկչական պայթեցումներ կատարելու: Թուսաստանը դա ներքին-կու տալ չէր կարող: Վարչապետ Փուլիինի հակազդեցութիւնն արագ էր ու

շարունակոււմ է եւ արժանանում Արեւմուտքի բացառապայտ դժգոհութեան, նկատոււմ է քաղաքատնտեսական առումով դժուար բացատրելի երեւոյթ՝ երկրից աւելի վաղ դուրս տարուած դրամագուլաների ներհոսք: Եթէ առաջ, երբ նոյնիսկ պատերազմ չէր, դրամագուլանի արտահոսքը որդ գնահատոււմներով հասնում էր տարեկան 20 միլիառ տոյարի, ապա վերջին 4,5 ամսում եւտ է հոսել»՝ միլիառ տոյար: Կառավարութեան եւ կեդրոնական Դրամատուկի խելայեղ դրամավարկային քաղաքականութեան շնորհիւ դրամի արժեզրկումը չբացել է, ուրիշին կայունացել: Հասանարար դրան մեծապէս նպաստել է պետութեան նկատմամբ վրատահութեան վերականգնումը, ինչպէս ամէն տեսակի հարկային պարտաւորութիւնները ցանկացած քաղաքացու համար չեն գերագնացում եկամուտների 13 տոկոսը: Սա նշանակոււմ է, որ Մոսկուան համարձակօրէն գնում է աստիճանական հարկման համակարգից հրաժարոււմը: Դա նաեւ պարզօրէն է ձեւակերպել «չստից՝ շատ, քիչ» քիչ՝ բանաձեւով, փոխարէնը որդեգրելով «բոլորից» հասարակ տոկոսով՝ հարկման մեքքանից: Իսկ դա նշանակոււմ է, որ պետութիւնը իրախուսում է քաղաքացիներին հարստացման ձգտումը, պայմաններ ստեղծում մինչեւ այժմ ստուերային տրեւտաւարման գալթակողութիւններից հրաժարուելու, իրական եկամուտները օրինականացնելու համար: Այժմ արդէն վերանում է իրական եկամուտները թաքցնելու անհրաժեշտութիւնը՝ պայմանաւորուած «ինչու՞ շատ ցոյց տալ» հոգեբանութեանը, որովհետեւ արդէն չկայ «որքան շատ եկամուտ, այնքան մեծ հարկ» մտաւախութիւնը:

Թուսաստան տնտեսութեան այս գարթնքը Փուլիինին հնարաւորութիւն է տալիս Արեւմուտքի հետ խօսել «ձայնը տաք օտեղից» եկող մարդու տեսքով:

Փուլիինն ակնյայտօրէն աւելի «զգատ» արտաքին քաղաքականութիւն որդեգրելու միտումներ է դրսեւորում՝ փորձելով առաւելագոյն կարճ ժամկետում վերականգնել Թուսաստանի դերը եթէ ոչ աշխարհում, ապա գոնէ Եւրոպայում եւ Ասիայում: Վկան՝ եւրոպական երկրներ նրա կատարած այցերն են եւ Եւրոպային համատեղ հակաօդային պաշտպանական համակարգ ստեղծելու առաջարկը, որ արեւ օրերն է ունեւում: Դժուար է ասել, թէ գործնապէս դա ինչպեանք է հնարաւոր, յայց քաղաքական առումով «չհաւանք» շատ խօսուն է: Փուլիինն ընդգծում է, որ Թուսաստանն այլեւ Եւրոպայի «թշնամին» չէ, այլ՝ գործընկերը, ընդամենը՝ նաեւ ՕՍԹԵՒի գործընկերը: Միջինասիական շրջան նրա կատարած այցի իմաստը նույնպէս իր փախնցիկ էր՝ Թուսաստանն այստեղ իր շահերն ունի եւ ամենեւին մտադիր չէ դրանք ունէլ մէկին «զիջել», որքան էլ «թաւան» լինի դրա «գիրք»: Մոսկուայում Միացեալ Նահանգների նախագահ Պիլ Քլինթոնին ընդունելուց յետոյ, որի ժամանակ անդրովկիանոսեան հիւրն անթաքց ժատանաշում էր համաշխարհային խաղաղութեանն ուղղուած «նոր սպառնալիքները», այսպէս կոչուած, «թափփուկ» երկրներից, որոնց թուում մատնանում էր Հիւսիսային Բորէան, Փուլիինն անսպասելիօրէն «երեսով շրջեց» դէպի նոյն այդ երկիրը, արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի շուրթերով յայտարարելով, թէ «նախագահ Փուլիինը մեկնում է քարեկամ երկիր»: Ահա այսպէս՝ ձեզ բարեկամ երկիր է, մեզ համար՝ «բարեկամ»: Սա մի քանի «ծալքերով» հանելուկ է. ա) Թուսաստանն իր բարեկամներին ինքնուրոյն է ընտրում, անկախ նրանց, թէ դա ձեզ որքանով է դուր գալիս, բ) Թուսաստանը կարող է ստանձնել «թափփուկների» եւ Արեւմուտքի միջեւ «կամրջի» դերը, եթէ դուք իսկապէս ուզում էք չեզոքացնել համաշխարհային խաղաղութեան սպառնացող վտանգը, գ) Թուսաստանը կարող է նեցուկ դառնալ «թափփուկներին», եթէ դուք գնաք թշնամանքի խորացման կործանարար ճանապարհով:

Միտը բանիւ, Վլատիմիր Փուլիինը Թուսաստանի եւ համաշխարհային պատմութեան մէջ փորձում է բացել նոր էջ: Որքանով կը շնորհուի՝ ցոյց կը տայ ապագան:

ՈՒՏԻՎ ՅՈՎՀԱՆԻՍԵԱՆ «Ազգ»

ՅԱՐԱՐՈՂ ԼՐՏԵՄԵՐ ՓՆՏՈՒԵԼՈՎ՝

ՍԻ.ԱՅ.ԷՅ. Կ՛ՈՐԴԵԳՐԷ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու կեդրոնական հետախուզական գործակալութիւնը (Մի.Այ.Է.Ե.) սկսած է այլազանութիւն ստեղծել իր գաղտնի բաժանմունքին՝ «գործողութիւններու վարչութեան» մէջ:

Ինչպէս պետական այլ գործակալութիւններ, Մի.Այ.Է.Ե. եւս ընկերային բաղադրի մասնակց կը համարէ փոքրասանութիւններու եւ կիներու ներգրասումը: Լանթր գաղտնի սպասարկութիւնները երկարատեւ են ի վեր կ'օգտագործեն գաղտնակներ, որոնք ատակ են ներթափանցելու օտար շրջանակներ: Ինքնակախ սակայն, որովհետեւ Մի.Այ.Է.Ե. առաւելաբար կեդրոնացած է ահաբեկչներու, թմրեցուցիչի մաքսաներման, զենքի վաճառակներու եւ այլ «դժուար թիրախներու» վրայ, որոնք ներկայ չեն գտնուիր դեպքումներու խրախուսման ներքին, ոչ սպիտակամորթ եւ այլազան լեզուներու տիրապետող լրտեսներու պահանջը աւելի քան երբեք բարձրացած է, կը լայնանան բարձրաստիճան պաշտօնատարներ:

Լուելի քան տասնամեակէ ի վեր պաշտօնատար վարձելու իր սեծագոյն արշաւին ծիրին մէջ գործակալութիւնը սկսած է կարգ մը օրաթերթերու եւ հեռուհեռու տարբերաբերթերու, ինչպէս՝ «Տի Լընոմսիս»-ի մէջ հրատարակել ծանուցումներ, որոնք «գործողութիւններու վարչութիւնը» կը ներկայացնեն իբրեւ «գեղեցիկ երիտասարդներու ծիանման» մը:

Սակայն իրականութիւնը այլ բան է: Մի. Այ. Է.Ե. թողած արարի պատասխանատու - պաշտօնատարներու (անոնց թիւը հազարէ աւելի կը մասնատուուի) 17 առ հարիւրը միայն փոքրասանութիւններու մաս կը կազմէ. պաշտօնատարներուն 18 առ հարիւրը կիսն է: Թէեւ Մի. Այ. Է.Ե. տնօրէն Մորն Թեյնթը վեց ամիս առաջ սեւանորթ ամերիկացի Տոնալտ Քրայրըրը նշանակեց այլազանութեան ծրագրի հարցերով տեղակալ, բայց գործակալութեան բարձրաստիճան պաշտօնատարներու գերակշիռ մասը կը

մնան սպիտակամորթները:

Ինչպէս պաշտօնատարներուն շնորհիւ հարիւրը բնիկ օտարալեզու խօսող է, իսկ 75 առ հարիւրը կը տիրապետէ օտար լեզուներու՝ երկրէն դուրս սպարած ըլլալուն պատճառով:

«Գործողութիւններու վարչութեան» փոխ տնօրէն Մայքլ Փայթը կ'ըսէ, որ ներկայիս վարչութիւնը կը հաւաքագրէ այնպիսի պաշտօնատարներ, որոնց կարողութիւնները ուղղակիորէն օգտագործելի են ահաբեկչութեան դէմ պայքարին համար: Այս կարողութիւններուն կարգին են՝ ուսերէնի, արաբերէնի, պարսկերէնի կամ չինարէնի տիրապետում: «Այս լեզուներուն տիրապետումը կ'ենթադրէ, որ անոնք կրնան բնիկներ ըլլալ եւ լեզուն սորված ըլլալ իրենց մայրերուն գիրկը», կ'ըսէ ան:

Պաշտօնատարներ կը լայնանան, որ՝ գործակալութեան մասին փոքրասանութիւններուն բացասական պատկերացումը կը դժուարացնէ անոնց ներգրասումը: Մի.Այ.Է.Ե. անցեալին հովանաւորած է Լատին Ամերիկայի եւ Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցած պետական հարածները, ինչպէս նաեւ կարգ մը սեւամորթ ամերիկացիներ այն համաձայնք ունին, թէ գործակալութեան աշխատակիցներ նպաստած են ամերիկեան քաղաքներու մէջ քրեայինի տարածումին:

Ասով հանդերձ, Մի.Այ.Է.Ե. պաշտօնատարներ կը շեշտեն, որ կարելի է գտնել փոքրասանութիւններու անդամ այնպիսի թեկնածուներ, որոնք բացասական պատկերացում չունին գործակալութեան մասին:

Կրթութիւնը երկրներու տարածքին աշխատող լրտեսական ծառայութեան այլազանութիւնը կը նկատուի կարեւոր գործօն մը: Սակայն կարգ մը պաշտօնատարներու համաձայն, գաղտնի գործողութիւններու մէջ այլազանութեան կարեւորութիւնը հաւանաբար կը չափազանցուի, նկատի ունենալով, որ «փողոցային» լրտեսական գործողութիւններուն մեծամասնու-

թիւը կը կատարուի օտարերկրացիներու կողմէ:

Մի.Այ.Է.Ե. ի բառապաշարին մէջ Մ. Նահանգներու քաղաքացի մը, որ իբրեւ արհեստավար լրտես կ'աշխատի օտար երկիրներու մէջ, կը կոչուի «թողած արարի պատասխանատու պաշտօնատար» (բլէյս օֆիսըր), իսկ Մի.Այ.Է.Ե. ընկերակալութիւնը ստացող օտարերկրացի «գործակալ» (էլեմէնթ): «Գործակալներուն մեծամասնութիւնը կը ղեկավարուի նոյն ազգի պատկանող - վարիչ գործակալի» մը կողմէ եւ ոչ թէ «թողած արարի պատասխանատու պաշտօնատար»-ի: Կան նաեւ գործակալներ, որոնք կը հայրալիքէն փոխադրուին իրենց, ապահով բնակարաններ եւ այլ տեսակի սպասարկութիւններ:

«Գործակալութեան կարգ մը նախկին պաշտօնատարներու համաձայն, այլազանութեան պահանջը կը նուազի Մ. Նահանգներու դեսպանութիւններու փողոցի Մի. Այ. Է.Ե. լայնախառն օգտագործումով: Ասիական աւելի գործակալներ են, քան դեսպանութիւններէ դուրս արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներու պիտակին տակ աշխատող լրտեսները այդ պիտակին տակ աշխատող լրտեսները գաղտնի օտար սպասարկութիւններու ուշադրութիւնը անմիջապէս կը գրասեն:

Արհամարհելով Ռորտ Թեյնթի կողմէ այլազանութեան առաջադրումը իբրեւ «գործողութեան հրամայականի», Մի. Այ. Է.Ե. նախկին լրտեսները կը պնդեն, որ ազգային որեւէ ենթահող ունեցող պաշտօնատար մը, ըլլալ սեւամորթ, սպիտակամորթ, ասիացի կամ լատին, կրնայ աշխատել աշխարհի որեւէ շրջանի մէջ՝ գործողութիւնները: «Փորձառութեան այլազանութիւնը անհրաժեշտութիւն մըն է», կ'ըսէ ան: «Ազգային այլազանութիւնը ընկերային գոյացումները նպաստելու մը կրնայ ըլլալ, սակայն ոչ մէկ ձեռով՝ գործողութեան հրամայական», կ'ըսէ նախկին լրտեսը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍԸ Կ'ԱՌԱՋԱԴՐԷ ԸՆԴԱՐՁԱԿԵԼ ԱՐԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկու տարի առաջ արեւելեան Աֆրիկէի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատններուն դէմ տեղի ունեցած պայթումներէ ետք, Քոնկրէսի կողմէ կազմուած ահաբեկչութեան շարքերով ազգային յանձնաժողովը կը պնդէ, որ կառավարութիւնը աւելի խիստ քայքայու պէտք է դիմէ կասեցնելու համար ահաբեկչութիւնը: Յանձնաժողովի առաջարկներէն կարգին են՝ Մ. Նահանգներու մէջ օտար ուսանողներու հսկողութեան տակ առնուիլը Մի.Այ.Է.Ե. նկատմամբ սահմանափակումներու մեղմացումը եւ բարեկամ երկիրներու Յուստոնի եւ Փարիսի նկատմամբ պատժամիջոցներու որդեգրումը:

Յանձնաժողովը նաեւ կը պահանջէ, որ ահաբեկչութեան դէմ պայքարին յաւելեալ գումարներ յատկացուին, հսկողութեան տակ առնուին Մ. Նահանգներու մէջ ահաբեկչութեան համար կատարուող կասկածելի դրամաշնորհները, եւ յաւելեալ ճնշում բանեցուի օտար երկիրներու գործակալութիւնը ապահովելու համար: Յատկանշական առաջարկներէն է, որ նախագահ Պիլ Քլինթոնը Մ. Նահանգներու բանակը եւ ոչ թէ ԷՖ.Պի.Այ.ը կամ ԷՖ. Ի. Է. Է. ընկալու առնէ իրրեւ այն կառույցը, որ Մ. Նահանգներու հողին վրայ տեղի ունեցած ահաբեկչական գործողութիւններու պարագային պիտի հսկէ կառավարութեան ցուցմունքներու գործողութեան:

Յատակ չէ, որ յանձնաժողովը որքան ազդեցութիւն կրնայ ունենալ Քոնկրէսի եւ Քլինթոնի վարչակազմին վրայ, սակայն ԵՄ Է.Ե. չ'ընդունեց տեղեկագիրը յստակօրէն գրուած է առաւելագոյն հետաքրքրութիւնը յառաջացնելու համար կառավարութեան հակաահաբեկչական քաղաքականութիւնը բարեփոխելու ուղղութեամբ:

Ընդհանուր առմամբ գնահատելով Մի.Այ.Է.Ե.ը եւ ԷՖ.Պի.Այ.ը, 10 հոգիներ յանձնաժողովը կ'առաջարկէ ջնջել այն կանոնները, որոնք համաձայն, Մի.Այ.Է.Ե.ի կեդրոնատեղի բարձրաստիճան պաշտօնատարներ հանձնութիւն պիտի տան հակաահաբեկչական գործողութիւններու համար նոր պաշտօնի կողմէ այն անձներուն, որոնք նախապէս լուրջ յանցանք գործած են:

Յանձնաժողովը նաեւ կ'ըսէ, որ ԷՖ.Պի.Այ. պիտի պարզեցնէ իր այն կանոնները, որոնք կը թոյլատրեն նախնական կամ ամբողջական քննութիւններ բանալ կասկածելի ահաբեկիչներու դէմ: Մի.Այ.Է.Ե.ի բանբեր Պիլ Հարիս չ'բաժնեց յանձնաժողովին կարծիքը, թէ նորապիւրներու մասին գործակալութեան կանոնները խոչընդոտած են հակաահաբեկչական գործողութիւնները: Իսկ ԷՖ.Պի.Այ. մերժած է որեւէ մեկնաբանութիւն կատարել:

Առաջարկներու կարգին է Յուստոնի եւ Փարիսի տանի նկատմամբ հաւանական պատժամիջոցներու սահմանումը: Մինչ երկու երկիրները սերտ կապեր ունին Մ. Նահանգներու հետ, յանձնաժողովը կ'առաջարկէ, որ Քլինթոնի վարչակազմը գտնուի նկատելի ահաբեկչութեան դէմ «ոչ ամբողջութեամբ գործակցող» պետութիւններ:

Այս կարգավիճակը, որ չորս տարի առաջ հաստատուեցաւ Քոնկրէսի կողմէ, մէկ աստիճան վար է «ահաբեկչութիւնը հովանաւորող» պետութիւններու կարգավիճակէն: Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան համաձայն, «ահաբեկչութիւնը հովանաւորող» պետութիւններն են՝ Իրան, Իրաք, Լիպիա, Սու-

րիա, Սուտան, Հիւսիսային Գորէա եւ Քուպա: «Ոչ ամբողջութեամբ գործակցող» երկիրներուն կ'արգիլուի ամերիկեան պիւստուրական կազմածներ եւ գէնքեր գնել: Յանձնաժողովը նաեւ կ'առաջարկէ, որ այս երկիրները դուրս դուրսին այն կարգավիճակէն, որուն համաձայն, բարեկամ երկիրներու քաղաքացիները իրաւունք կ'ունենան առանց վիզայի մուտք գործել Մ. Նահանգներ:

Յանձնաժողովին համաձայն, Փարիսիտան ապահով վայրեր եւ երթեւեկ կը հայտնաբերէ ահաբեկչական խուճրբեր, ինչպէս նաեւ բարոյական, քաղաքական եւ դիւանագիտական հովանաւորութիւն կը ցուցաբերէ անոնց: Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան կողմէ ամիս մը առաջ հրապարակուած տեղեկագիր մը եւս նմանօրինակ հաստատումներ կ'ընէր:

Յանձնաժողովի տեղեկագիրին համաձայն, Յուստոնի կրակորակ կեցուածք որդեգրած է ահաբեկչական գործողութիւններու նկատմամբ: 1975ին ի վեր Յուստոնի մէջ ամերիկեան շահերուն դէմ տեղի ունեցած են 148 ահաբեկչական գործողութիւններ, որոնցմէ միայն մէկ պարագայ ծախքերը բացառուած են, իսկ մնացեալ բոլոր դէպքերը կը մնան չլուծուած, կը նշէ տեղեկագիրը:

Ներկայիս միայն ԱՖղանիստան կը գտնուի «ոչ ամբողջութեամբ համագործակցող» կարգավիճակին մէջ: Յանձնաժողովը կը նշէ, որ Պէն Լատինիս ապստան տուած ԱՖղանիստան պէտք է դուրս մտնէ երկիրներու խմբակին մէջ:

Յանձնաժողովի համաձայն, այդ ետեւ երկիրներէն Իրան «կը մնայ ամէնէն գործունենան»: Ան կ'առաջարկէ, որ Քլինթոնի վարչակազմը Իրանի բարեկարգչական նախագահ Խաթեմիին գործակցող կանցնելու ուղղութեամբ յաւելեալ ոչ մէկ պիւրում կատարէ, «մինչեւ որ Թեհրան ապացուցէ, թէ կ'դրած է ահաբեկչութիւնը հովանաւորել», եւ ամբողջական գործակալութիւն ցուցաբերէ 1998ին Սկուտական Արաբիոյ մէջ ամերիկեան դիւնուրական կեդրոնի բարահարման քննութիւններու ուղղութեամբ:

Յանձնաժողովը կ'առաջարկէ, որ նախագահ Քլինթոն Սուրիոյ ուղղութեան յանձնէ, որ ան պիտի մնայ այդ ցանկին մէջ, մինչեւ որ Դամասկոս զաղրեցնէ «Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին ընդլայնացող ահաբեկչական խուճրբերու հովանաւորումը»:

Անդրադառնալով օտար ուսանողութեան՝ յանձնաժողովը կը նշէ, որ ուսանողներուն մեծամասնութիւնը որեւէ սպառնալիք չ'ի ներկայացներ. սակայն չնչին փոքրամասնութիւն մը կրնայ շահագործել իր ուսանողական կարգավիճակը՝ հովանաւորելու համար ահաբեկչական գործողութիւնները:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատրոյէն Օլպրայթ հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ ահաբեկչութեան մասին մտահոգութիւնները պիտի չ'առաջնորդեն Յուստոնի եւ Փարիսիտանի նկատմամբ պատժամիջոցներու որդեգրումին՝ հակառակ Քոնկրէսի տեղեկագիրին: «Մենք անոնց վրայ ճնշում կը բանեցնենք, սակայն նկատի չ'ունինք պատժամիջոցներ», ըսաւ Օլպրայթ:

«ՆԵՐԸՆ ԹՐԻԳՒՌԻՆ»

CSA **CESKE AEROLINIE**

ՊԵՅՐՈՒԹ - ՓՐԱԿԱ - ՊԵՅՐՈՒԹ

•Ուղղակի կապ եւրոպական, ամերիկեան եւ քաղաքական գլխաւոր քաղաքներու հետ:

•Զբոսաշրջային եւ բուժական հանրային ջորերու կեդրոններ:

KARLOVY VARY-PIESTANY MARIANSKE LAZNE
Shpag, անդամայնու-թիւն, ռոմաիզմ, ջրային, մարտական դրոթիւն եւ շաքարախառն:

Ընդհանուր ներկայացուցիչ:

TRANSAS
Ֆեդիխա փողոց, հեռ. 01-361439 եւ 01-368950

ՓՈԼԻԿԼՕԹ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՄԱՆ՝ 28ՐԴ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝
 Փոլի վարչապետ եւ ներքին գործոց նախարար **ՊՐՆ. ՄԻՇԷԼ ՄԸՐԻ**

Պատգամախօս՝ **ՏՈՔԹ. ԺԱՆ ԽԱՆՃԵԱՆ**
 (Նախագահ Հալկազեան Համալսարանի)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Յուլիս 2000, Երեկոյեան ժամը 8:00ին, «Շայէ Սուխալի» մէջ:
 Հանդիսութեան անմիջապէս ետք ընտանեկան շեքմ նշակերույթ-խրախնայ:

ՄՈՒՏՐ՝ ՀՐԱԻՐԱՏՈՄԱՆ

ՆԱՅ ԿԱԹ. ՄԵՏՈՂԵՍ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆԵՏԱՐՔՐԱԿԱՆ ԱԶԳ
ՆԱՅ ԱՇԱԿԵՐՏԻՆ (14էն 18 փաքեկան)

ԱՄԱՌԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԸ

Չովացուած եւ արդիական սրահներու մէջ 17 Յուլիսէն մինչեւ 14 Սեպտեմբեր

Ուրախութեամբ կու գանք տեղեկացնելու ձեզի, թէ վարժարանիս տնօրէնութիւնը, շահաւետ նկատելով ամառային արձակուրդը, ծրագրած է կազմակերպել աշակերտական յատուկ դասընթացքներ հետեւեալ մասնագիտութիւններուն մէջ.

Ա. Բամակարգիչ. WINDOWS 98 - WORD - INTERNET

Բ. Լեզուներ. ԱՆԳԼԵՐԵՆ - ՖՐԱՆՍԵՐԵՆ - ԻՏԱԼԵՐԵՆ - ՐԱՅԵՐԵՆ ԵՒ ԱՐԱԲԵՐԵՆ

•Դասաւանդութիւնները կը սկսին Երկուշաբթի, 17 Յուլիս 2000ին:
 •Արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ Ուրբաթ, 14 Յուլիս, ամէն օր, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 1:00 եւ կէսօրէ ետք ժամը 3:30էն 8:00ը միջեւ, քարտուղարութեան մօտ:
 •Կառատունը ապահովուած:
 •Հասցէ՝ Պուրճ Համուտ, «Արաքս» պողոտայ:
 Հեռաձայն 01-260504, 01-254938 եւ 01-254939:
 E-mail: mesrobca@dm.net.lb
 Web site: www.mesrobian.com

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Հոգեբանական

ՅՈՒՇԵՐԸ

Մարդկային լիճողության գործունեության մասին գիտնականները կատարած ուսումնասիրությունները արդեն իսկ ցույց տալով են, որ անհիպ տեսական գործընթաց մըն է և թե միտքը տեսարար փոփոխության կ'ենթարկվի ավելի քան 10 րոպեից հետո:

Յիճողության գործընթացի ուսումնասիրության ծիր է ներառում «Լրեխաներու և պատանիներու հոգեբանական ամսաթերթ-ին մէջ վերջերս լոյս տեսան Օրբանյոյի Բժշկական համալսարանի հոգեբանական դասախոս Տանիէլ Օֆֆորի աշխատանքին արդիւնքները, որոնք ցույց կու տան, թէ մեր մանկութեան զգացումներուն մասին մեր լիճատակները կրճանող կի սխալ ըլլալ:

1962ին Օֆֆորի հարցախոյզը մը կատարած էր 14 տարեկան 67 պատանիներու հետ և անոնցմէ խնդրած էր, որ նկարագրեն իրենց զգացումներն ու ապրումները: 34 տարի ետք, երբ այդ պատանիները 48 տարեկան չափահասներ դարձած էին, Օֆֆորի անգամ մը ես դիմած է անոնց՝ այս անգամ խնդրելով, որ լիճողութիւններու հիման վրայ նկարագրեն իրենց պատանեկան տարիքին ունեցած զգացումները: Հարցախոյզին մասնակիցները այնքան տարբեր պատասխաններ տուած են 48 տարի առաջ տրուած նոյն հարցումներուն, որ Օֆֆոր կը նշէ, թէ ոեւէ անհատ կրճար ենթացողութիւններ կատարել և նոյն արդիւնքներուն հասնի: Ան կ'ըզրակացնէ, որ մարդիկ տարիներու ընթացքին կը փոխեն իրենց անյնալի պատկերացումը և իշատակները:

Այս ընդգծումը չի նշանակեր, որ մարդիկ կը մոռնան իրենց անցեալի տուեալները (օրինակ՝ իրենց ընտանեկան կեանքի իրադարձութիւնները կամ շրջապատի իրակացութիւնը), այլ իրենց մանկութեան և պատանեկութեան զգացումներուն վերաբերեալ անոնց լիճատակներն են (նոյնիսկ ընտանիքի անդամներուն կամ ընտանեկան կեանքի կապուած զգացական ծանրութիւն ունեցող լուծերու պարագային), որոնք «կասկածելի» են Օֆֆորի համար:

Օրինակի համար, պատանեկան տարիքին մասնակիցներուն միայն 14 ան հարիւրը ինքզինքն ներկայացուցած է իբրև մօր նախընտրած զուակը: 34 տարի ետք, ետ նայելով իրենց անցեալին, նոյն անհատներ 34 տարեկան հարիւրը նշած է, որ ինք նախընտրեալն էր զուակներուն մէջ: Իոյնպէս, պատանեկան տարիքին մասնակիցներուն 41 ան հարիւրը, իր ընտանեկան կեանքին վատթարագոյն տուեալին վերաբերեալ հարցումին պատասխանած է, որ իր տունը ֆիզիքայէտ հանգստաւէտ չէ, բայց 11 ան հարիւրը միայն նշած է, որ նաեւ հոգեպէս անհանգիստ է իր ընտանեկան յարկին տակ: Հափառաս դառնալով ետք անոնք 15 ան հարիւրը միայն կը լիճէ ֆիզիքական անհանգստութիւնը, սինչ 51 ան հարիւրի համեմատութիւն մը կը գանգատի, որ հիմնական անհանգստութիւնը հոգեկան էր:

Իոյնպէս հակասական արդիւնքներ տուած է շատ «առարկայական» հարցումը՝ տան մէջ ֆիզիքական պատիժներու կիրարկումին վերաբերեալ: Հարցախոյզին մասնակիցներուն 82 ան հարիւրը իր պատանեկան տարիքին մէջ ըսած է, թէ ֆիզիքական պատիժի կ'ենթարկուին: Սինչն չէ չափահաս տարիքի հասնելէ:



ետք անոնց միայն 33 ան հարիւրը լիճած է այդ կացութիւնը: Մասնակիցներուն մէկ մասը նոյնիսկ ինքզինքն տարբեր լիճած է: 14 տարեկանին անոնց 5 ան հարիւրը միայն ըսած է, որ կը սիրէ գրել և կարդալ: 48 տարեկանին անոնց 23 ան հարիւրը իր պատանեկան տարիներուն նախընտրած գրադարձը նկատած է մտային աշխատանքը:

Օֆֆորի ուսումնասիրութեան արդիւնքները հետաքրքրական են բժշկներուն, հոգեդարմանողներուն, ինչպէս նաեւ կենսագիտներուն համար: Իր յօդուածին մէջ Օֆֆոր անոնց կը թելադրէ շատ անելի գործը ըլլալ և վերլիճումները նկատել «գոյութեանական վերականոցումներ»:

Յիճողութեան վերաբերեալ իր ընդգծումներուն կողքին, նշելով ուսումնասիրութիւնը այլ հարց մը նաեւ կը բարձրացնէ՝ մարդկային ներաշխարհին մէջ ժամանակի հասկացութեան հարցը: Ժամանակը հնարած է մարդկային ընկերութեան արտոնելու համար, որ ինքզինքն «համակարգէ». բայց արդեօ՞ք անհիպ իրապատու իմաստ ունի զգացական-հոգեկան ներաշխարհին մէջ: Կան յուզումներ և զգացումներ, որոնք չեն փոխուիր «ժամանակ»ի ընթացքին և անոնք էական այն զգացումներն են, որոնք վրայ կը կատուցուի մարդ անհատին ներկայ (և որոնք կաշկարանումը կը տանի մտային- հոգեկան տագնապներու): այսպէս՝ Վեռնիկի նկատմամբ սէրը: Ինքզինքին հէջ համոզիտ էր հաշտ ըլլալու կենսական պահանջը եւայլ: Այս ձգտումներն են, որոնք սակն վարկանք կը պայմանադրեն մարդ անհատին կեանքը և անոնց (գիտակից թէ անգիտակից) շարժումներն են, որոնք կը ստեղծեն երջանկութիւն կամ վախեր, խորքին մէջ անոնք են նաեւ, որ պատճառ կը դառնան լիճատակներու «վերականոցում»-ին, որ իր կարգին կապուած է իրականութիւնը տեսնելու կամ անկէ փախուտ տալու կենցաղաբնութիւնը:

Հետեւաբար այս իմաստով, ժամանակի հասկացութիւնը բոլորովին տարբեր արձագանգ կը ստանայ զգացական տարողութեան մէջ «վերլուչ» նաեւ կը նշանակէ, որ կայ ներկայ վարկեան մը, ուր անհատը կը վերապրի որոշ պատահար մը, հիմնական թէ երկրորդական լստակ է, որ լուջը տարբեր մեկնաբանութիւն կը ստանայ՝ ըստ ներկայ վարկեանի ուրախութեան կամ տխրութեան:

Օֆֆորի ուսումնասիրութիւնը այս ուղղութեամբ չ'երթար և լուսարձակի տակ կ'տանէ ուղեղի և յիշողութեան գործունեութիւնը՝ ժամանակի հասկացողութեան ծիրէն ներս: Հետաքրքրական պիտի ըլլար, որ հոգեբանները թէ մարդկային ներաշխարհի պեղումը կատարող այլ մասնագետներ շեշտը դնէին այն երեսին՝ ներկայ վարկեանի ապրումին վրայ: Պէտք է նշել, որ հոգեվերլուծական թէ հոգեդարմանական միտքերու ընթացքին հոգեբանը կ'ընդգծէ «պատեղ և հիմա»-ին մէջ ապրելու անհրաժեշտութիւնը՝ մղելով անհատը, որ այդ վարկեանի զգացումներն ու մտածումները արտայայտել և անոնց հիման վրայ փորձէ հասկընայ իր ներաշխարհը տագնապեցնող հարցերը: Սակայն այդ «հիմա» կը սահմանափակուի միտքի լատկացումը ժամանակով: առաջ, միտքերու ծիրէն դուրս կան տեսութիւններ, որոնք մարդկային կեանքը կը բաժնեն տարիքային և ժամանակի կապուած այլ հանգըրուաններու և ըստ այնմ կը մեկնաբանեն դժուարութիւններն ու հոգեմտաւոր իրականութիւնները: Այս մտտեցումը պատճառ դարձած է, որ ստեղծուի «անցեալ»-ի իրապատու պատահար մը, ըստ որում, անհատի մը մտքը կեանքը պայմանաւորուած է արդէն իսկ անցած դէպքերով և փոխանակումներով: մինչդեռ այդ պատահարները կը կազմեն ներկայ մը, որ անհատին ներաշխարհին ու ապրումներն է, և որուն վրայ անհատը ուղղակի ազդեցութիւն ունի: Այս իրողութեան բացայայտումն է, որ պէտք է ծառայեն մարդկային գիտութիւնները և մասնաւորաբար հոգեբանութիւնը, և ոչ՝ կեանքի իրականութեան նկատմամբ՝ հիմանը՝ ընդդիմութիւնը «բնական» դիմադրութեամբ փոխանակելու ճիգին:

Պատրաստեց՝ Թ. Ա.

«ԱՁՂԱԿ»-ի ՇԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱՁՂԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 և 241274:

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՏԱԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է սրամտութիւնը: Ի՞նչ ձեռով ան մաս կը կազմէ անհատականութեան և արդեօ՞ք անհիպ դարձանող յատկութիւններ ունի: «Կատակասիրութիւն և առողջութիւն» ամբողջական ամսաթերթի հարցումներուն կը պատասխանէ հոգեբան Ռոլոբը Օրբանը՝ իր փորձառութեան և ուսումնասիրութիւններուն հիման վրայ: Անոր մտքերը հետաքրքրական են, մասնաւորաբար ինչ կը վերաբերի «ես»-ի կառուցմանը, ինչպէս նաեւ՝ կատակասիրութեան ձեռքով դէպի ինքնաճանաչում և կեանք մղումին: Օրբանը անգամ է Ամերիկայի Հոգեբանական Ընկերակցութեան և Նախկին Նախագահը՝ Ամերիկայի Ատլերեան Հոգեբանութեան Ընկերակցութեան ան ակնի քան 400 յոդուած հրատարակած է հոգեբանութեան դերակատարութեան և մասնաւորաբար խնդրիք և կատակասիրութեան անհրաժեշտութեան մասին:

Հ.- Ի՞նչպէս կը բնութագրէ կատակասիրութիւնը և ի՞նչ է անոր յարաբերութիւնը անհատականութեան հետ:

Պ.- Բազմաթիւ հոգեվերլուծողներ կը գրեն կատակասիրութեան մասին, սակայն խորքին մէջ անոնք կը խոսին սրամտութեան մասին: Ֆրէյտը մեծ տարբերութիւն դրած է այս երկուքին միջև: Ես կը կարծեմ, որ Ֆրէյտի համար, կատակասիրութիւնը հասունութեան նշան էր, բայց նաեւ միաժամանակ՝ հոգեկան խանգարում մը, որովհետեւ անհիպ իրականութեան հերքում մըն է:

Ըստ ինձի, կատակ սիրելը մտքի թակարդեղնէլ խուսափելու, հակասութիւնները տեսնելու և մեր մէջ անոնց գոյութեան անդրադարձնելու կարողութիւնն է: Ես կը կարծեմ, որ կատակասիրութեան բացակայութեան մտածեցի երբ կարդայիք «ես»-ին մէջ: Բայց կ'ուզեմ մտքեր, գրապոմներ և կենցաղաբնութիւնը, որոնք ցույց կու տան այն համոզումը,

թէ որոշ ձեռով պէտք է վերաբերիլ և զգալ սիրուելու և սիրելի ըլլալու համար: Եթէ ես կարենամ «բռնել» այս պատկերները, եւ միտքերը, կրնամ օգտագործել կատակասիրութիւնը՝ «ես»-ի գնահատման ժխտական դրուժեղնէլ խուսափելու համար:

Կատակասիրութիւնը առիթ կու տայ, որ մենք տեսնենք, թէ որքան անհեթեթ են ընդհանրապէս անհիպ տեսքերը և ինչպէս կը կարգադրուին: Մահը և սեռը բազմաթիւ կատակներու նիւթ են, որովհետեւ անոնք մեր հակադրութիւնը դուրս բերեն: սակայն մենք տակաւին անիմաստ կերպով կը փորձենք գանոնք ենթադրել մեր «ես»-ին: Իմ տեսութեանս մէջ մէկն է մեծ հակադրութիւնը՝ տկար «ես»-ին և «ինք»-ին միջև է: Մենք պէտք է գորայնք «ես»-ը այնպէս մը, որ անոր ներուժը միանայ մեր նեփին կուտեան, որ դատումներ չի կատարեր և սահմաններ չի գծեր:

Կը կարծեմ, որ իսկական կատակասիրութիւնը կապուած է անհատական հոգեկան անկախութեան: Անհիպ կապուած է ինքնագնահատումին և ինքնակենսակցութեան, որ իր կարգին չի կրնար ուրիշներէն կախաւ ըլլալ: Մեր «ես»-ին տկարութիւնը միշտ այլ գոյութիւն պիտի ունենայ, բայց մենք պէտք է այդ մէկուն անդրադառնանք և պաշտպանենք մեր ինքնութիւնը (առանց նախապայմաններու արժեքաւոր ըլլալու և հաղորդակցելու գոյութեամբ):

Ֆրանսիսքէն վարդապետ մը՝ Ռիչար Ռուհըրըրտն է, որ «ես»-ի գնահատումը հիմնուած է ուժի, դիրքի և վարկի վրայ: Միջանկախական մակարդակի վրայ այս մէկը կը

նշանակէ, որ ես միշտ պէտք է ուրիշն ըլլալ, միշտ տարբեր, և այս տեսական ճիգը յաճախ կը յանդիս հաղորդակցութեան խոսումին: «Ես»-ի խաղին մէջ մենք միշտ կ'ուզենք «աւելի լաւ», «աւելի շատ», «աւելի» ըլլալ: Միւս կողմէ՝ «ինք»-ը կը միաւորէ կատակասիրութիւնը կը պաշտպանէ ինքնագնահատումը և ոչ՝ «ես»-ի գնահատումը:

Վերջապէս, պէտք է կատակասիրութիւնը գնահատել սրամտութեան: Ընկճուածութեան մէջ հետեւ անհիպ իրականութեան հերքում կրնայ ըլլալ, նոյնպէս՝ համակերպումը և կեանքը անիմաստ նկատելու մտտեցումին մէջ:

Հ.- Ի՞նչպէս սկսած էք հետաքրքրուիլ կատակասիրութեամբ:

Պ.- Առաջին անգամ կատակասիրութեան մասին մտածեցի երբ կարդայիք սրամտութեան վերաբերեալ Ֆրէյտի 1928ի յոդուածը: Հետագային սկսայ կատակասիրութեան խորասորել: Պատրաստած էի թեստ մը, որուն մէջ շուրջ 12 անբնութներ կային: անոնց աւարտները կը տարբերէին իրենց ընդհանրութիւնը: մէկ մասը՝ կատակասիրութիւնը մաս մը՝ կ'ընէ սրամտութիւն և մաս մըն էր իմ սրամտութիւնը: Այս լուսարձակները կատարած էի Ֆրէյտը:

Թեպէտ կատարեցի 3000 անհատներու հետ: Ուսումնասիրութիւններուն ընդհանրութեանս հիմնական կէտն է հաւատալու ուսումնասիրութիւնը և սիրող Սառուճոյ մը հետ ստեղծող ըլլալու իրողութիւնը: Երեւութեան (բայց ոչ իրական) հակասութիւններու կայ ներաշխարհի կեանքը սիրելիութեան կեանքը սիրելիութեան կեանքը: Ժամանակակից ընկերակցութեան լրուորութիւնը և բանականութեան տիրապետութիւնը պարզապէս կ'ամրապնդեն «ես»-ի մշակուցը, որ չի կրնար իսկական երջանկութեան տանի:

Հ.- Ի՞նչ ձեռքով կը կարծէք, որ կարելի է զարգացնել անհատը մը կատակասիրութեամբ:

ԿԱՏԱԿԱՆ ԵՒ ԱՐԿԱՏՈՒԹԻՒՆ ԶԻՉԱԿԱՒՈՐ ՄԱՐԿԻՅՈՒՆ

«Հոգեբանութիւնը, որ ամեն մարդ զիս կ'առնէ, պատասխանեց, որ մտածումս անհեթեթ է. ամեն մարդ զիս չի ձանձար»:

ՈՍՏԻ ՏԵՆՃՐՔԻՆՏ

«Երբեմն կուզեմ այն, ինչ որ միայն դուն կրնաս տալ՝ բացակայութիւնը»:

ԱՃԼԻ ՊՐԻԼԵՆՅՈ

«Աշխարհի վրայ ապրիլը կրնայ սուղ ըլլալ, սակայն տարեկան ձիւ պտոյտ մը ունի՞մք արեւուն շուրջ»:

ԱՃԼԻ ՊՐԻԼԵՆՅՈ

«Ժողովրդավարութիւնը պարզապէս կը նշանակէ ժողովրդին գաճակոծումը՝ ժողովրդին կողմէ, ժողովրդին համար»:

ՕՍԵԱՐ ՌԻՍԷՆՏ

«Աւելի լաւ է գեղեցիկ ըլլալ, քան՝ բարի: Բայց արեւի լաւ է բարի ըլլալ, քան՝ տղոյն»:

ՕՍԵԱՐ ՌԻՍԷՆՏ

ԱՆՆԱԽԵՆԹԱՑ ՓԱՌՍՈՍ, ՅՈՒՑԱՐԱՆԴԵՍ ԵՒ ԵՄԵՐ ՊԱՁԱՐ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»-Ի ՄԷՋ Բարեհաճ օրինութեամբ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Հովանաւորութեամբ ԺԻՊԷՅՅԼԻ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ Կազմակերպութեամբ «ԹԻՉՆՈՑ ԲՈՅՆ»-Ի ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ • Բացում՝ 7 Յուլիս 2000, Երեկոյեան ժամը 7:30ին: Գեղարուեստական յայտագիր Երեկոյեան ժամը 8:30ին, կատարուութեամբ «Ռեչնոց Բոյն»-ի աշակերտներուն: • 8 Յուլիս 2000ին Գեղարուեստական յայտագիր Երեկոյեան ժամը 8:30ին, կատարուութեամբ ՏԻԿԻՆ ՍԱԼԲԻ ԲԵԼԵՆԵԱՆԻ ԵՒ «ՕՐԸՆԵՐԳ» նուագախումբին: • 9 Յուլիս 2000ին Գեղարուեստական յայտագիր Երեկոյեան ժամը 8:30ին, կատարուութեամբ՝ լիբանանահայ երգչուհի - երգիչներու Շարէ Պաղտասարեանի, Լիլա Փարպեանի, Արարատ Ահարոնեանի, Հրաչ Կաթակեանի, Կարո Կապուտակեանի և Մանուկ Միհասեանի: Մասնակցութեամբ Սեդո Պաղտասարեանի և իր նուագախումբին: Ցուցահանդէս բաց պիտի ըլլայ ամէն առաւօտ ժամը 10:00էն 1:00, իսկ երեկոյեան ժամը 5:00էն 10:00: ՀՐԱՆԵՐ

